

ՀԵԹՈՒՄ ԱԽՏՈՒՑ ՏԻՐՈՉ ԵՎ ՎԱՍԻԼ ՄԱՐԱԶԱԽՏԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերջերս Մատենադարանը ստացավ Բրիտանական թանգարանում պահվող հայերեն ձեռագրերից պատմական երկերի միկրոժապավենները: Դրանց մեջ առանձին ուշադրության է արժանի Օր 5458 ժամանակագրությունների ժողովածուն¹, որի նկարագրությանն առաջին տողամ հանդիպում ենք Կոնիսթանդնուպոլիսի², որտեղ բերված են պատմական հետաքրքրություն ներկայացնող մի քանի ժամանակագրական վկայություններ³:

Միկրոժապավենի ուսումնասիրությամբ ունի յուրյց տվեց, որ այդ կարևոր ժամանակագրությունները, դժբախտաբար, շատ թերի են առանձին թերթերի թափվելու պատճառով: Թերթակորույս ձեռագիրը վերանորոգելիս կաղմողը նոր, մաքուր թերթեր է ավելացրել կորածների փոխարեն, հետագայում բնագիրը ամբողջացնելու նպատակով: Այստեղ, սակայն, նա թույլ է տվել մի անճշտություն. կազմելիս սխալաբար իրար է խառնել, ետևառաջ է կազմել տարբեր ընդգրկից առանձին թերթեր: Այնպես որ ձեռագիրն այժմյան վիճակով իրենից ներկայացնում է ժամանակագրությունների խառնաշփոթ, պակասավոր մի ժողովածու:

Դեղնավուն թղթի վրա, խոշոր հստակ բոլորգրով դրված 180 թերթանոց ձեռագրից (15 պրակ $\times$ 12 թերթ) պակասում է 35 թերթ, այն էլ մանր ժամանակագրությունների բաժնից: Զեռագրի երկու երրորդը կազմող առաջին բնագրից՝ միայն Գունդուստարի «Պատմությունից» ոչ մի թերթ չի պակասում:

Ժողովածուն իր մեջ ամփոփում է հետևյալ նյութերը (թվարկում ենք ձեռագրի հերթականությամբ).

Ա. Միայն Գունդուստարի «Պատմություն» յունացի Կոստանդնուպոլիսի և Հայոց Մեծաց յայնմ ժամանակի ժամանակագրություն...», որը համընկնում է 1856 թ. մոսկովյան հրատարակությանը՝ զբաղեցնում է զրչագրի 5ա—116ր + 126ա—126ր էջերը: Գրիչը բնագրի լուսանցքներում հետագայում ավելացրել է մի քանի կարևոր վկայություններ, իսկ Միայնի շարունակողի մոտ վերոհիշյալ տպագրության մեջ բացակայում է բավականին մեծ հատված, որը վերաբերում է Տիեզերական ժողովների մասնակիցներին և հայ կաթողիկոսների ժամանակագրությանը: 111ր էջի վերջից սկսում և 114ա էջում վերջանում է Կանչո տեր Օշինի շահած Նսմակր Անավարզացի Գրիգոր եպիսկոպոսին և վերջինիս պատասխանը:

Բ. Ժամանակագրությունը ըստ եօթանասնիցն թարգմանություն. էջ 117ա (մի տող էլ նախորդ էջում):

Գ. Համառոտ պատմություն ժամանակաց. էջ 117 — 128ա—126:

Դ. Յազաճայ մինչև ի ծնունդն Քրիստոսի. էջ 128ր—129ա:

Ե. Խոստովանություն, էջ 129ր, 130ա, 130ր և 143ա:

Զ. Անանուն ժամանակագրություն (որ մենք համարում ենք Վասիլ մարաշխանի), էջ 131ա—135ա:

¹ Զեռագիրը մինչև թանգարան ընկնելը պատկանել է մեծանուն վիպասան Բաթթուն:

² A Catalogue of the Armenian Manuscripts the British Museum, by Frederik Cornwellis Conybeare, London, 1913, № 116, էջ 290—291:

³ Վ. Հակոբյանը Կոնիսթանդնուպոլիսից բաղել և իր կազմած «Մանր ժամանակագրությունների» մեջ է մտցրել այդ վկայությունները (տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հատ. Ա (այսուհետև՝ ՄԺ)):

⁴ «Սմոնատայ Սպարապետի եղբոր Հեթում Առաջնոյ արքայի Հայոց Պատմություն յունաց Կոստանդնուպոլիսի և Հայոց Մեծաց ըստ կարդի ժամանակաց», Մոսկվա, 1856:

է. Հեթում Բ թագավորի տարեգրությունը⁵, Թերի. էջ 135ր—142ր:

Ը. Հայոց թագավորների և իշխանների կարգը. սկզբից թերի⁶. ավարտվում է 1375 թվականով: էջ 144ա—145ա:

Թ. Ժամանակագրական առանձին վկայություններ, էջ 143ր, 145ր:

Թվարկած նյութերից հրատարակված են Ա, է և Ը (մինչև 1351 թ.) գործերը. մյուսներից Գ, Զ և Թ ժամանակագրությունները և ժամանակագրական հատվածները հրատարակվում են ստորև՝ առաջին անգամ, իսկ Բ և Դ նյութերը առանձին արժեք չեն ներկայացնում:

Զեռագիրը երեք տարրեր գրչություն ունի, որովհետև երեք տարրեր ժամանակներում է գրված. բայց գրիչը միևնույն անձն է, ինչպես կրկնում է գրերի մանրակրկիտ ուսումնասիրությունից և այլ հանգամանքներից, որ կտեսնենք ստորև⁷:

Զեռագիրն սկսված է խոշոր, կանոնավոր բոլորգրով Այգ գրությանն են վերաբերում Ա, Բ, Գ, Ը և Թ սյուրթերը: Այստեղ առաջին երեք նյութերը պահպանում են հաջորդականությունը, իսկ մյուսներն այժմ ընկած են ձեռագրի վերջում: Մեզ թվում է, որ «Հայոց թագավորների և իշխանների կարգը» (Ը) մուծված է եղել Սմրատի Պատմության շարունակության մեջ այնպես, ինչպես «Հայոց կաթողիկոսների կարգը»:

Սմրատի շարունակողի վերջին երկու վկայություններին նախորդել են նաև ժամանակագրական առանձին վկայություններ (Խ), որ վերջանում են 1382 թվականով:

Այնուհետև արտագրված է Հեթում Բ թագավորի տարեգրությունը (է), որի գրչությամբ գրիչը Սմրատի Պատմության լուսանցքներում հավելումներ է կատարել: Վերջապես հաջորդում են Դ և Զ հատվածները, որտեղ արագագրության հետևանքով տառերն ավելի անկանոն են դառնում, շնայած նույնն են տառաձևերը և կցագրությունները: Վերջին ժամանակագրությունը հասնում է մինչև 1404 թ.: Այսպիսով, ձեռագիրն ստեղծվել է շուրջ քսան տարվա ժամանակամիջոցում (1382 թ. հետո մինչև 1404 թ.):

Զեռագիրը հիշատակարան շունի և գրչության հանգամանքները մեզ անհայտ են մնում: 1113ա երեսի լուսանցքում ձեռագրի գրչությամբ գրված է՝ «Կարօտած ծառայս Վասիլոս Անունը գրված է փակագրով և երկու անգամ: Կասկած չկա, որ Վասիլը գրիչն է: 111ա էջում «Պարոն Պաղտին Նզրի տիրոջն որդին» բառերից հետո, որով վերջանում է սովորաբար հայոց մարաթախտների թվարկումը Սմրատի Պատմության մեջ, այլ ձևագրով ավելացված է՝ «Պարոն Վասիլին, պարոն Լիպարտին եղբարն գրած է: աստուած ողորմի իր հոգուն, ամէն ու Ռ (1000) ամէն»: Այս բառերը գրողը կամ ծանոթ է եղել գրչագրին ու Վասիլին և կամ այժմ կորած հիշատակարանից ելնելով դրել է այդ տեղեկությունը: Ինչևէ, արժեքավոր այս վկայությունը հաստատում է, որ ձեռագիրը պարոն Վասիլի գրածն է և որ նա պարոն Լիպարտի եղբայրն է: Սրանք Թորոս Կապանցի ավագ մարաթախտի որդիներն են, որոնք հետագայում նույնպես դառնում են ավագ մարաթախտներ: Սրանցից Լիպարտիսը 1369 թ. հերոսաբար զոհվում է Սսի պաշտպանության ժամանակ և փառարանվում գրականության մեջ ու բանավոր գրույցներում⁸:

Գուցե Վասիլը միայն առաջին մասի գրիչն էր, իսկ մյուս մասերում գրչագրական նմանությունները պատահական են:

Գրչի կողմից Սմրատի պատմության լուսանցքներից մեկում ավելացված է մի շատ կարևոր վկայություն (էջ 99բ—100ա), որից իմանում ենք նաև, որ 1308 թ. Օշին թագավորն իր փոքր քրոջը՝ տամուժիկ Ալիծին ամուսնացնում է վրաց թագավորի որդի Դավթի հետ, որոնց

«Համառօտ պատմութիւն ժամանակաց հաւաքեալ ի զանազան պատմութեանց, այսինքն՝ ի Հայոց, ի Ֆոնականց, ի յունաց, ի յաւորոց գրեանց, աշխատութեամբ իմոյ ծառայիս Քրիստոսի աստուծոյ Հնրմոյ տեսառն Կոռիկոսոյ, ի թվականի Հայոց Չեծ (1296)», ՄԺ, հատ. Ա, էջ 74): Զեռագրում ընդգծված բառերի փոխարեն գրված է Յովհաննէս սպասաւոր բանի: Իսկ Հովհաննէսը նույն ինքը Հեթում Բ թագավորն է, որ 1293 թ. հրաժարվելով գահից դառնում է կրոնավոր, ընդունելով «Յովաննէս» անունը: Իկյգ մասին տե՛ս ՄԺ, հատ. Ա, էջ 69—70:

6 ՄԺ, հատ. Ա, էջ 204—205:

7 Խոստովանությունը (Ե), ինչպես և այլ հավելումներ, գրված են ավելի ուշ շրջանում և մեր գրչի հետ ոչ մի կապ չունեն:

8 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 451: Հմմտ. Ալիշան, Սիսուան, էջ 548:

9 Հովհաննէս Թլկուրանցի, Տաղեր, աշխատասիրությամբ էմ. Պիվադյանի, 1960) էջ 27 և «Տաղ քաջ Լիպարտին», Հովհաննէս Թլկուրանցի, էջ 202, «Պատմութիւն քաջ Լիպարտին», գրույց, էջ 274:

հարսանիքը 1311 թ. Տարսոնում կատարելուց հետո, նրանց որպես ընակության վայր նվիրում է Կապանը: Դավիթը դառնում է Կապանի տեր: Սրանց որդին կարող էր կոչվել Կապանցի: Եվ ահա Պաղտինի մահից հետո (1336) հայոց սպարապետի պաշտոնում տեղում ենք Խորոս Կապանցի (Կապանցի) ավագ մարաջախտին, Վասիլի և Լիսպարիտի հորը¹⁰: Վասիլը, ինչպես տեսնում ենք, իր տոհմի նախնիներին վերաբերող վկայություն է մտցրել Սմրատի գործի մեջ, հավաստելու համար իր թագավորական ընտանիքից սերված լինելը:

Նույն ձևով Հեթում Ախտուց տիրոջ ժամանակագրության մեջ է մտցնում տամ Ալիծի (տամուծել Ալիծի) ծննդյան մասին վկայությունը (էջ 121բ):

Կոստանդին Ե թագավորի ժամանակ Վասիլը ավագ մարաջախտ էր: Թագավորի սպանությունից հետո, ինչպես վկայում է Դարդելը¹¹ (1373), նա դառնում է Մարիամ թագուհու (Կոստանդին Դ-ի կին) կամ, ավելի ճիշտ, թագապալի շորս խնամակալներից մեկը, նրա ոգնակաճը քաղաքական և զինվորական դժուր և՛ էր ժամանակ նա ամրաստանվում է արքունական գանձարանը կողոպտելու մեջ և թանաքակվում Սսի միջնաբերդում, Կոստանդին Ե-ի կնոջ հետ միասին: Թագավորի հրամանով Վասիլը «չարտ էր մեռանել զմահ անարգութեան»¹², բայց թագմաթիվ պարոնների և ավագների խնդրանքով ազատվում է մահից, իսկ ապա պատվի արժանանում նույն թագավորից:

Շատ ժամանակ շանցած Վասիլը լատին լատին Մատթեոս զր Շապալի (Կոստանդին Ե-ի կնոջ ամուսինը) և այլոց հետ միասին լատինամուլ և՛ էր Ե թագավորի դեմ դավադրություն կազմակերպում, որը սակայն անհաջողության է մատնվում¹³: Վասիլ մարաջախտը այս անգամ էլ է ներվում:

1375 թ. գերված և՛ էր Ե թագավորի և կաթողիկոսի հետ Եղիպտոս են տարվում նաև Մարիամ թագապահը, Վասիլը և այլ իշխաններ:

Դարդելը վկայում է, որ երբ սուլթանը թույլ է տալիս գերյալներին վերադառնալ Սիս, Վասիլը, ուրիշ շորս իշխանների հետ միասին, հավատափոխ է լինում և չի վերադառնում¹⁴:

Վասիլին հետագայում հանդիպում ենք իր ժամանակագրության մեջ, 1399—1400 թթ. Անունը չի հիշատակվում այնտեղ, սակայն պատմում է ինքը գրիչը, և երևում է, որ նա եղել է արքունիքի հետ կապված բարձրաստիճան անձնավորություն: Երբ Դամասկոսում բռնվում է թաթարների կողմից, քրիստոնյաներ են հանդիպում, որոնք ճանաչում են նրան Սսից, որովհետև այդ մարդիկ թի մեր երկիրն եկել ին ի պարոնն, անկան յառ թագաւորն, ու նաքայ եղան մեզ վկայ» (էջ 133ա): Վասիլն այստեղ էր եկել եգիպտական զորքերի հետ միասին: Այստեղից ազատվում է, գնում Երուսաղեմ, որտեղ և, հավանաբար, գրի է առնում գլխին եկածը, որն սկսում է և՛ էր Ե-ի մասին եղած վկայությամբ և ավարտում 1404 թ.: Այսպեսով սպառվում են մեր տեղեկությունները գրչի մասին:

Ներկայացվող ընագրերից ամենակարևորը Հեթում Ախտուց տիրոջ, հայոց չամբուլայի ժամանակագրությունն է, որ կրում է «Համառոտ պատմութիւն ժամանակաց» խորագիրը: Այն սկսվում է 1099 թ. և հասնում մինչև 1344 թ.:

Թնագրում տեղ-տեղ նկատվում է անախրոնիզմ (էջ 122բ), որոշ թերթեր կորած են (118, 122 և 125 թերթերից հետո): 1341 թ. վկայությունը կիսատ է (125բ էջ), իսկ հաջորդ թերթերը չկան: Մինչև ուր է հասցրել Հեթումը պատմությունը, հայտնի չէ: 1341 թ. հետո երեք էջի վրա (127ա, 128բ, 128ա) սկսում է 1305 թվականից նույն դեպքերի համառոտ շարադրանքը, մի երկուսի բացառությամբ: Վերջին վկայությունը վերաբերում է 1344 թ.: Այստեղ ևս էջը ավարտված չէ:

Ինչպես երևում է, ժամանակագրությունը թերի և Չնայած դրան, այն կարևոր աղբյուր է Կիլիկիայի հայկական թագավորության, հատկապես XIV դարի առաջին կեսի պատմության համար:

Թնագիրը կարելի է բաժանել երկու մասի. առաջին՝ ուր քաղվածո վկայություններ են գրանցված գոյություն ունեցող տարեգրություններից, և երկրորդ՝ ուր պատմում է ինքը՝ Հեթում Ախտուց տերը որպես ականատես և որոշ դեպքերի մասնակից անձնավորություն:

10 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 451, հմտ. «Սիսուան», էջ 548:

11 «Յովհաննու Դարդելի ժամանակագրութիւն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1881, էջ 79, 109—110:

12 Նույն տեղում, էջ 116:

13 Նույն տեղում, էջ 132:

14 Նույն տեղում, էջ 154:

Արժեքավորը, անշուշտ, ժամանակագրության երկրորդ մասն է, որտեղ կան այլուստ անհայտ, նույնիսկ «Սիսուան» պատկանելի համագրության հեղինակ Ղ. Ալիշանին անժանոթ փաստեր:

Հեղինակը ծաղկաքաղ է արել Հեթում Բ թագավորի տարեգրությունից¹⁵, չհաշված որոշ մուծումներ և վկայություններ մի տարի հետո կամ առաջ նշանակելուն: Մինչև 1296 թ. Հեթում Ախտուց տիրոջ գործը դուրս չի գալիս հիշյալ ժամանակագրության սահմաններից: Պահպանված է նույնիսկ Հեթում Բ-ի տարեգրության խորագիրը՝ «Համառօտ պատմութիւն ժամանակաց»¹⁶:

Հեթում Ախտուց տերը իր երկն սկսելով խաչակիրների կողմից նրուսաղեմը գրավելու ժամանակից՝ ընտրել է այն վկայությունները, որոնք Կիլիկիայի պատմության, նրա թագավորների ու արքունիքի հետ են առնչվում: Շարունակության մեջ հեղինակը պահպանել է այդ սկզբունքը և արձանագրել որոշ դեպքեր, կապված իր կյանքին ու գործունեությանը:

Հեղինակին՝ Հեթում Ախտուց տիրոջը, առաջին անգամ հանդիպում ենք ժամանակագրության մեջ՝ 1305 թ. երբ Լևոն Գ թագավորը նրան ասպետ է կարգում. «... արար ձիաւոր զիս ղՀեթում Ախտուց տէր ջամբուլա Հայոց» (էջ 127ա): 1320 թ. Օշին թագավորի մահից հետո, Լևոն մանկահասակ թագավորի խնամակալներ են նշանակվում «պարոն Օշին Կոռիկոսի տէրն ու զպարոն Հեթում Ախտուց տէրն», ինչպես վկայում է ժամանակագրությունը (էջ 123ա): Բարսեղ վարդապետը, 1325 թ. Մաշկեորի վանքում այս դեպքերը արձանագրելով, հիշում է, որ խնամակալներ են նշանակվել «պարոն Աւշին և պարոն Կոստանդին, որք աստիճանաւ աւար պարոն և գունդատապլ կոչին, և երրորդն՝ պարոն Հեթում Նղրցի»¹⁷: Նշանակում է՝ Հեթում Ախտուց տեր հայոց ջամբուլան, նույն ինքը՝ Հեթում Նղրցի հայոց ջամբուլան է¹⁸, մեր ժամանակագիրը:

Հեթում Ախտուց տերը Օշին հայոց արքային ազգական Կոստանդին ավագ պարոն թագավորահոր (մահացած 1262 թ.) թոռն էր, Նղրի առաջին տիրոջ՝ Կոստանդինի (մահացած 1308 թ.) երեց որդին: Նա, որպես աշղպիսին, հորից ժառանգել էր Նղիր բերդը և կոչվում էր Հեթում Նղրո տեր, կամ Նղրցի¹⁹: Այդպես է կոչվում ինքն իրեն օտարների հետ ունեցած գրագրություններում և այդպես էլ կոչվում նրանցից՝ Aytonus de Nigrino²⁰: Հայ աղբյուրներում

15 ՄԺ, հատ. Ա, էջ 74—87:

16 Նույն տեղում, էջ 74:

17 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 193. հմտ. Ալիշան, Սիսուան, էջ 412:

18 Գրիգոր Ակներցին 1367 թ. ավարտած ավետարանի հիշատակարանում գրում է. «...ի թագաւորութեան Հայոց Կոստանդինա՝ որդւոյ պարոն Հեթմոյ Ախտուց տէր կոչեցելոյ» (տես ԺԴ դար. էջ 478), իսկ այդ ժամանակի հայոց թագավորը Կոստանդին Ե (1365—1373) Հեթում Նղրցու որդին էր:

19 Նղիրը (լատիներեն Nigrum, Nigrinum, արաբերեն «նուղէիր» է անվանվում) Կիլիկիայի արքունական նշանավոր բերդերից է. գտնվում է Ճկեր ծովամերձ գավառում, այժմյան Սամանիեի արևմտյան և Պայասի շրջանային կողմում, Սև (Ամանոսի) լեռների վրա, ճանապարհների խաչմերուկում, և այժմ կոչվում է Խոփրագ-գալե: Լատիներեն բերդը հիշվում է castrum Regis Nigrum ձևով: Ըստ որոշ հեղինակների նշանակում է արքայական Սև բերդ», ամրության շինանյութի թուխ-սրճագույն լինելու պատճառով, և կապ չունի Սև լեռների անվան հետ: Ալիշանը գտնում է, որ «թուշնոյ մի անունն առնուած է» («Հայապատում», էջ 535. ծան. 3. հմտ. Նորայր Բյուզանդացի, Բաղգիրը ստորին հայերենի, էջ 1073): Սկզբում այն գյուղ. կամ ավան է եղել: Առաջին անգամ հիշվում է 1274 թ. (Սիսուան, էջ 411). նրա առաջին տերն է Կոստանդինը, որից անցնում է որդուն՝ Հեթումին: 1335 թ. Հալսպի ամիրա Աթուն Պուզան գրավում է այն, որը օրինականացվում է թագավորի դաշնագրով:

20 1308 թ. Վենետիկի դուքսը Կիլիկիա դեսպան ուղարկելու առիթով նամակներ է հղում Օշին թագավորին, նրա եղբորը՝ Ալիսախին, Հեթում Կոռիկոսցուն և Հեթում Նղրցուն: Վերջին երկուսին հասցեագրված լատիներեն գրություններ են հասել նաև 1310—1312 թթ.: «Վասնզի երկուքն ալ հզորք էին և մեծահարգիք ի պետութեան Հայոց» — գրում է Ալիշանը («Հայ-Վենետ», էջ 100—102): Այդ գրություններում Հեթումը հիշատակված է որպես «Aytonus dominus Nigrini, capitaneus curie regis Hermentia»: Capitaneus բառը «Հայ-Վենետում» թարգմանված է գլխավոր դարպասի պետ, իսկ «Սիսուանում» — հաղարապետ (տես, համապատասխանաբար, էջ 100 և 412):

նույնպես նա Հեթում Նղրցի է։ Սակայն մեզ հետաքրքրող ժամանակագրության մեջ նա ինքն իրեն կոչում է միայն Հեթում Ախտուց տեր և այդպես է հիշվում հետագա հայ աղբյուրներում²¹։ Բանն այն է, որ նա Նղրցի կամ Նղրո տեր կարող էր կոչվել, բանի դեռ այդ ամբողջ պատկանում էր իրեն և ինքն ուրիշ կալվածք կամ բերդ չուներ։ Նղրից զրկվելուց հետո (1335—1336 թթ.), մեզ թվում է, հայոց ջամբուլան թագավորից ստանում է մի նոր կալվածք՝ Ախտիքը (սեռական հոլ՝ Ախտուց), որի ինչ և ուր լինելը հայտնի չէ և որի անունից էլ Հեթումն իրեն կոչում է Ախտուց տեր։

Նա վաղ տարիքից է մտել արքունիք ծառայության, գուցե ասպետ կարգվելուց առաջ՝ պես հետո։ Սղել է թագավորի գլխավոր դարպասի պետ, ապա ջամբուլա և խնամակալ սղևորայա՝ թագավորին։ Նա արդեն բավական աչքի էր ընկել իր ծառայություններով և մեծ հեղինակություն ուներ արքունիքում։ Այդ էլ լսում Բարսեղ Մաշկեորցու վկայությամբ նրան խնամակալ նշանակելու առթիվ. «որ խառնեալ և միացեալ է ընդ նոսա (ավագ պարոն Օշինին և նրա եղբայր Կոստանդին Դունդուտարին—Ա. Մ.), որպէս միտք ընդ հոգի և մարմին, ուղղելով զրոյր տունն արքունի ի բարին, որպէս բարի միտքն զհոգին և զմարմին»²²։

1317 թ. Օշին թագավորը նրան ուղարկում է Նեապոլ, 1319 թ.՝ Ավինյոն՝ պապի մոտ, ուր մնում է երկու տարի, 1329—31 թթ. զրազվում է Լեոն թագավորի ամուսնության գործերով, մի քանի անգամ գնում է Սիցիլիա։ Նղրի բերդը զրավելուց հետո գնում է սարա սուլթանի մոտ և այնու վերջին տեղեկությունը իր ժամանակագրության մեջ վերաբերում է 1344 թ., երբ նա գնում է Կոստանդնուպոլիս և վերադառնում։ Այլևս նրա մասին տեղեկություն չունենք, մինչև 1358 թ.։ Բաց այդ ժամանակի ընթացքում նա դարձյալ մնացել է հայոց ջամբուլա։ Նրա զորեղ օգնությամբ էլ, անշուշտ, իր սպանված եղբայր Պաղտին մարաջախտի որդի Կոստանդինը 1344 թ. գահ բարձրանում և որստ կարի խաղաղութեամբ թագավորում տասներեք տարի (1345—1363)։

Այնչափ Հեթում Նղրցի ջամբուլայի և Հեթում ջամբուլայի մեջ երկու տարբեր անձնավորություն է տեսնում, դրա համար էլ մահվան տարբեր ժամանակներ է նշանակում։ 1328—36 թթ., այսինքն այնտեղ մահուան վասակայ և յառաջ քան զեղորոն կրսերոյ, որ է Պաղտին²³ և աշխատության ժամանակագրական ցուցակում՝ 1356 թ., երբ «վախճանվեց պարոն Հեթում ջամբուլայն»²⁴։

Առաջին թվականը հերքվում է հենց Հեթումի գրած ժամանակագրությամբ, որի դեպքերը, ինչպես ասացինք, անցնում են 1336 թ., իսկ երկրորդը՝ մի ձեռագրի հիշատակարանով, որը պատկանել է Հեթում Ախտուց տիրոջը։ 1356 թ. մահանում է Հեթումի ավագ որդի ձուրին²⁵։ Որդու մահն էր ողբում հայրը՝ Հեթում հայոց ջամբուլան, մայրը՝ տամ Զապլունը և եղբայրը՝ Կոստանդինը²⁶։ Ուրեմն 1358 թ. Հեթումը դեռ ապրում էր։ Այստեղ էլ նա կոչվում է Հեթում ջամբուլա հայոց և արքունական տանն գլխավորա։

1367 թ. մի հիշատակարանում Հեթումի որդի Կոստանդին թագավորին հիշում են որպես արդեն հանգուցյալ «ամենազովութեանց արժանավորին մեծ և հլաւրին և ամենամեծ ջամբ(ր)»- լին Հաոց պարոն Հեթմոյ» որդի²⁷։ Այդ թվականից շատ առաջ է մահացել, երկար է ապրել ավագ որդու մահից հետո, կամ չի տեսել արդյոք կրտսեր որդու թագադրումը, առայժմ անհայտ է։

21 Տե՛ս է. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն հիշատակարաններ, էջ 477—478 և Լենինգրադ, Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների ինստիտուտ, հայերեն ձեռագիր Арм. В—1, էջ 478, 479։

22 Է. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 193։

23 Վասակը, ինչպես վկայում է ինքը Պաղտինը, վախճանվել է 1328 թ.։ Իսկ 1336 թ. Պաղտինի մահվան թվականն է, որ տեղի ունեցավ Հալեպի բերդում, որտեղ զնդանել էր Աթուռ Պուղան (սՍիսուան, էջ 412)։

24 Նույն տեղում, էջ 560։

25 Սղրոր մահվան առթիվ Կոստանդինը մի բանաստեղծություն է նվիրել նրա հիշատակին, որը տպված է «Սիսուանում» (էջ 413)։ Ձեռագիրը գտնվում է Մատենադարանում, № 345։

26 Այդ մասին հիշատակագրություն է գրանցել Թորոս եպիսկոպոսը. «...Արդ վիշտ և զնեղութիւն և պաղեսարշութիւն ծնաւոցս զորայ. ո կարէ պատմել և կամ ընդ գրով արկանել զհաւր զպարոն Հեթմոյ, և զիւր մամային զտամ Զապլունին, և զլերդակից եղբար իւր պարոն Կոստանդեայ» (Լենինգրադ, հայերեն ձեռագիր Арм. В—1, էջ 478ր—479ա)։

27 Է. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 477։

Մութ են մնում նաև այլ կարևոր հարցեր: Մինչև 1344 թվականն է հասցրել նա իր պատմությունը, թե՛ շարունակել է: Չէ՞ որ այդ ժամանակից հետո նա ապրել է մեկուկես տասնամյակից ավելի դեպքերով հարուստ մի ժամանակաշրջան:

Մի բան է պարզ առայժմ. մենք ունենք մի հեղինակ, հունձին Հեթում Ախտուց տիրոջ՝ իր «Համառոտ պատմություն ժամանակաց» միակ գործով:

*

Ներկայացնում ենք Բրիտանական թանգարանի ՕՏ 5458 հայերեն ձեռագրի չհրատարակված նյութերը՝ Հեթում Ախտուց տիրոջ հայոց ջամբուլայի, Վասիլ մարաջախտի ժամանակագրությունները և ժամանակագրական մի քանի այլ հատվածներ՝ ասհրաթեշտ ծանոթագրություններով: Նկատի ունենալով, որ Հեթում Բ թագավորի տարեգրությունը հրատարակված և բարեխղճորեն ծանոթագրված է Վ. Ա. Հակոբյանի կողմից, ծանոթագրել ենք միայն այն, ինչ չկա հիշյալ հրատարակության մեջ:

Ա. Ա. Մաթևոսյան

(ՀԵԹՄՈՅ ԱԽՏՈՒՑ ՏԻՐՈՋ)
ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱՑ

- 117ր. Եղև՝ թափումն Երուսաղէմի և տիրեաց Բողոքոֆրէ տը Պոյլունն:
Ի թվին ՇԾԱ (1102) վաղջանեցաւ պարոն Հայոց Կոստնդին, և էառ զիշխանութիւնն անդրանիկ որդին Թորոսն:
Ի թվին ՇՀԸ (1129) վաղջանեցաւ պարոն Հայոց Թորոս, և էառ զիշխանութիւնն Լևոն եղբայր նորա:
Ի թվին ՇՂԳ (1144) Թորոս որդի Լևոնի Եկն ի Կոստընդինուպօլսէ և էառ զՎահկայն:
Ի թվին ՈՁ (1157) պարոն Հայոց Թորոս կրօնաւորեալ վաղջանեցաւ, և էառ զիշխանութիւնն Մլիհ եղբայր նորա:
Ի թվին ՈԺԳ (1164) Մլիհ եղբայր Թորոսի սպանաւ ի Սիս, և իշխանք Հայոց բերեալ զԻորէն որդի ի Ստեֆանէի և եղին պարոն Հայոց:
118ա Ի թվին ՈԻԲ (1173) տէր Ներսէս կաթողիկոսն Հայոց փոխեցաւ առ Քրիստոս, յօգօստոս ԺԳ (13) ի հինկշարթի:
Ի թվին ՈԻԵ (1176) Թաթարն էառ զմեծ Հայք²,
Ի թվին ՈԼԵ (1186) վաղջանեցաւ պարոն Հայոց Ընորէն, և էառ զիշխանութիւնն Լևոն եղբայր նորա:
Ի թվին ՈԼԶ (1187) եղև կոտորումն քրիստոնէից ի Սալահատնէն* մերձ Երուսաղէմ և կալաւ զթաղաւորն Կի: Եւ անյայտ եղև սուրբ խաչն Քրիստոսի: Եւ ետուն ի Սալահատինն զԱթա և զԱզիսալան: Եւ ի նոյն ամն էառ Սալահատինն զԵրուսաղէմ և զամէն Սէհլն, բաց ի Սրո և ի Տրապօլսոս:
Ի թվին ՈԼԹ (1190) կայսրն ալամնաց Ֆրէտրիկն, խեղդեցաւ ի գետն Սելեֆկիո և թաղեցաւ յԱնտէոքի//Եւ Ֆիլիպ ըռէ տ Ֆրանցն և Ընիջարդ թագաւորն ռնկեզաց անցին յայս կոյս ծովու և պաշարեցին զԱթա, որ և ի գալն թաղաւորն ռնկեզաց էառ ըզԿեպրոս կղզին ի յունաց և ի Կևոսակ տուկէն: Եւ սկիզբն եղև կարգաւորութեան ալաման ֆրէրացն:
118բ Ի թվին ՈԽԶ (1197) պարոն Հայոց Լևոն պսակեցաւ թագիւ և եկաց առաջին թագաւոր ի Կիլիկիա:
Ի թվին ՈԽԷ (1198) փոխեցաւ ի Քրիստոս տէր Ներսէս Սկևոյցին³:
Ի թվին ՈԾԳ (1204) գունդլ Ֆլանդրն և տուկն Վէնետկաց առին զԿոստընդինուպօլիս ի յունաց, և եղև կայսր Կոստընդինուպօ(լ)սի՝ Պաղտինն:

* Գրած է Ասլահատնէն:

- Ի թվին ՈԿԷ (1218) Հայոց թագաւորն Լևոն ետ ի հօումաց սուլտանն զԼուտարերդն և...*
- 119ա Ի թվին ՈՂԴ (1245) թագաւորն Հայոց Հեթում էառ զՊռականա ի հու-
մաց սուլտանէն քարմուտ արամբք, և հիաթատին սուլտանին զօրքն
պաշարեցին զՏարսուս**, որոց էին զօրագլուխք՝ Շամսատին Ասպա-
հանի սահիպն և Կոստընդին տէրն Լամբրունին. և դարձեալ ետուն
զՊռականա ի սուլտանն սիրով:
- Ի թվին ՈՂԵ (1246) թագաւորն Հայոց Հեթում, առաքեաց զեղրայրն իւր
զպարոն Սմբատ Գունգուստապլն ի Կիւիկ դանն:
- Ի թվին ՈՂԷ (1248) Լօիզ րոն տ Զրաւնցն Եկն յայս կոյս ծովու, և միու-
ամն⁴ էառ զՏիմիաթ: Եւ ի նոյն ամն⁵ խանկրուեցաւ ի Մսրա զօրացն
և կալանաւոր եղև: Եւ նոյն ժամայն ազատեցաւ զնով ՃՌ (100.000)
մարկ արծաթ և ՃՌ (100.000) տուկատ*** և յետ Կ (3) ամի/դար-
ձաւ յաշխարհ իւր:
- 119բ Ի թվին Չ (1251) առաւ Պռականա և յանօրինաց Նորբերդ⁶:
[Ի թվին ՉԱ (1252) Հեթում թագաւոր զնաց ի Մանկու դանն⁷:
Ի թվին ՉԴ (1254) յայտնեցան աղաճարիքն:
Ի թվին ՉԵ (1256) Հեթում թագաւորն Եկն ի Մանկու դանն:
Ի թվին ՉԷ (1258) Հուլայուն դանն էառ զԱլամութ և կոտորեաց զհա-
շիշիքն: Եւ էառ զՊաղտատ և կալաւ զխալիֆայն: Եւ Հեթում թագաւորն
էառ զՄունդաս րերդն յանօրենաց և խանկրեաց զՀոումաց հիծելի
որ զՄունդաս սղարեցին:
Ի թվին ՉԹ (1260) Հուլաունն էառ զՀալպ և տէրեաց Շամբուն: Ու դար-
ձեալ զօրքն Մսրա տիրեցին Շամբուն:
Ի թվին ՉԺ (1261) Պալիօւղն էառ զԿոստընդինուպօլիս ի Ֆռանկնոյն:
Ի թվին ՉԺԱ (1262) վաղջանեցաւ թագաւորահայրն Հայոց Կոստընդին
աւաք/պարոն և Հեթում թագաւորն զնաց ի Մանիօնն և խանկրեաց
զթուրքմանն խարամնաւ: Եւ թագաժառանգն Հայոց Լևոն ամուսնացաւ
րնդ Կեռաճ գուստրն պարոն Հեթում Լամբրունին տէրոջն: Եւ ծնաւ
դուստր զՋապլունն:
Ի թվին ՉԺԴ (1265) ծնաւ Հեթում թագաւորորդին, և վաղջանեցաւ պա-
րոն Օշին թագաւորաղբայրն՝ տ'րն Կօռիկօսոս:
Ի թվին ՉԺԵ (1266) ծնաւ դուստրն պարոնին Հայոց Ֆիմի: Եւ Սմլմօթն⁸
Մսրա զօրօքն մտաւ յերկիրս Հայոց, և ի Մառի րոնեցին զպարոն
Լևոն թագաւորորդին Հայոց Հեթմո և սպանին զմիւս որդին՝ զպարսն
Թորոս:
Ի թվին ՉԺԶ (1268) ձեռնայդրեցին կաթողիկոս Հայոց զտէր Յակոբ: Եւ
Լևոն թագաւորորդին՝ ազատեցաւ ի Մսրա Մսրցին զԱնտաք էառ:
Ի թվին ՉԺԸ (1269) փլաւն ի շարժէ Սարվանտիքարն ու Համուսն: Եւ
120բ ծնաւ դուստ/ր պարոնին Հայոց՝ Սպիլն:

* Այստեղ ամբարտվում է էջը. հաջորդ երկու թերթերը պակասում են (տե՛ս Կոնիքեր, ցու-
ցակ, էջ 290) և միտքը կիսատ է մնում: Իրացնում ենք միտքը Հեթում Բ-ի տարեգրությունից...
զ(աւգատի և ազատեաց զկալանաւոր իշխանսն իւրս (ՄԺ, Ա, էջ 79):

** Հեթում Բ-ի մոտ քանոսուս:

*** յՃՌ (100000) մարկ արծաթ և ՃՌ (100000) տուկատ նույն գրչությամբ ավելաց-
ված է հետո՝ ներքեի լուսանցքում:

- Ի ԲՎԻՆ ՉԺԹ (1270) Ըռէ տ Յրանցն պաշարեաց զԴօնիզն և անդ մեռաւ և թաղաւորեց որդի նորա Յիւլիպն: Եւ վաղջանեցաւ թաղաւորն Հայոց Հեթում և տէրեաց որդի նորա Լեոն:
- Ի ԲՎԻՆ ՉԻ (1271) ԺԴ (14) տաճիկ զալէ կոտորեցան ի Կեպրոս, և սիր Սևտուարան եկն յԱքա. և ընդրեցին պապ զԳրիգորիոսն, և արար զմեծ ժողովն ի Լիունն: Եւ թաղաւորն Հայոց թաղաւորն Լեոնն, և ծնաւ թաղաւորին որդի ի Մսիս՝ պարոն Թորոս:
- Ի ԲՎԻՆ ՉԻԱ (1272) ծնաւ Ըռորէնն:
- Ի ԲՎԻՆ ՉԻԲ (1273) ծնաւ դուստրն Զապուհն:
- Ի ԲՎԻՆ ՉԻԳ (1274) Պնդուխտար սուլտանն հմուտ զօրօք և խնց զկամարաւորս Մսսա, և աւերեաց զերկիրս ի Մար(ա)շա՝ մինչև ի Կ(ո)ռիկոս:
- Ի ԲՎԻՆ ՉԻԾ (1276) ծնաւ Սմբատն ու Սպիւն խեղեփք:
- 121ա Ի ԲՎԻՆ ՉԻՉ (1277) ծնաւ Կոստանդինն:
- Ի ԲՎԻՆ ՉԻԷ (1278) ծնաւ Թեֆանօն ու Ըռիթայն խեղեփք:
- Ի ԲՎԻՆ ՉԻԸ (1279) ծնաւ Ներսէսն, և Ալֆին մտաւ ի Հայք:
- Ի ԲՎԻՆ ՉԻԱ (1282) Մանկու Տամուր՝ եղբայր Ապաղա զանին մտաւ ի Շամբն:
- Ի ԲՎԻՆ ՉԻԲ (1283) Թուրքմանքն տիրեցին Մանիօնին յետ Ե (5) ամի պաշարման նորա: Վաղջանեցաւ Ապաղա զանն⁹ և Մանկու Տամուրն իւր եղբայրն և նստաւ միւս եղբայրն նորա Ահմատն: Ի սոյն ամի ծնաւ Աւշինն ու Ալինախն խեղեփք:
- Ի ԲՎԻՆ ՉԻԳ (1284) եղև թափումն Անամուռին ի Թուրքաց:
- Ի ԲՎԻՆ ՉԻԴ (1285) սպանաւ Ահմատ զանն, և Արղուն որդին ի յԱպաղա զանէն եղև զան:
- Ի ԲՎԻՆ ՉԻԵ (1286) վաղջանեցաւ Յիւլիպ րռէ տ Յրանցն, և թաղաւորեաց որդի նորա Յիւլիպ: Եւ վաղջանեցաւ թաղաւորն/Արաւիւնաց Փեոն, և թաղաւորեց որդի նորա Արֆուսն:
- 121բ Ի ԲՎԻՆ ՉԻԶ (1288) ծնաւ դուստր թաղաւորին Ալիծն¹⁰: Մեռաւ Արղուն զանն, և նստաւ զան եղբայր նորա Քեղաթուն¹¹:
- Ի ԲՎԻՆ ՉԻԸ (1289) վաղջանեցաւ ամենաբարի և ամենիմաստ թագաւորն Հայոց Լեոն և եկաց պարոն Հայոց անդրանիկ որդի նորա Հեթումն: Եւ Ալֆի սուլտանն Մսրա էառ զՏրապօլիս ի քրիստոնէից:
- Ի ԲՎԻՆ ՉԻԹ (1290) մեռաւ Ալֆի սուլտանն Մսրա, և եկեաց սուլտան որդի նորա Աշրաֆն:
- Ի ԲՎԻՆ ՉԻԿ (1291) Աշրաֆ սուլթանն Մսրա էառ ի քրիստոնէից զԱքա և զամէն Սէհն:
- Ի ԲՎԻՆ ՉԻԱ (1292) Աշրաֆ սուլթանն Մսրա սղարեց և էառ զՀօռօմկլայն. և տուին ի սուլթանն զՊեհեսնի րերդն: Եւ ի յայսմ ամի եղև մոլորումն զատկ/ի:
- 122ա Ի ԲՎԻՆ ՉԻԲ (1293) Աշրաֆ սուլթանն սպանաւ յիւր ծառայիցն, և նստաւ ի տեղի նորա իւր եղբայրն Միլէք Նասրն¹²:
- Ի ԲՎԻՆ ՉԻԳ (1294) ճնուէզքն շահեցան զվնիցիանացն կարվանն ի յԱյաս, և Հեթումն զպարոն Թորոս նստոյց և ինքն միայկեց եղաւ:

- Ի թվին ՉԽԴ (1295) սպանաւ Քեղաթաւ դանն և նստաւ Պատօ դանն, և ի սոյն ամի նստաւ դան Ղազան որդի Արղունին: Եւ գնաց Հեթումն առ Ղազանն¹⁴:
- Ի թվին ՉԽԵ (1296) Հեթումն զՍմբատն եղիս յաթոռն և ինքն էառ զպարոն Թորոս ու գնացին ի թագաւորութիւնն*:
- Ի թվին ՉԽԶ (1297) բռնեց Սմբատն զիր Բ (2) աղբայրն՝ զՂեթումն ու զպարոն Թորոսն:
- 1229 Ի թվին ՉԽԸ (1299) ԻԳ (23) օրն դեքտեմբրոն, չորեքշաբթի օր հազարն խանկրեց//զՄելիք Նասրն սուլտանն ի դաշտն Համաս:
- Ի թվին ՉԽԱ (1302) Մարցին երեկ ի Սիս:
- Ի թվին ՉԽԲ (1303) Մարցին տարաւ զՄլունն¹⁵:
- Ի թվին ՉԽԷ (1298) Մարցին սղարեց զՀամուսն: Ու Կապնու տէրն փախոյց զՍմբատն, որ սպանեց զպարոն Թորոս, և Եհան զՀեթումն ի բանդն¹⁶:
- Ի թվին ՉԽԶ (1297) սպանեց Սմբատն զիր եղբայրն զպարոն Թորոսն:
- Ի թվին ՉԽԴ (1285) Կեռան թագուհի վաղջանեցաւ յօգոստոս Թ (9):
- Ի թվին ՉԽ (1301) ներսէս վաղջանեցաւ, մահիս ԻԶ (26)¹⁸:
- Ի թվին ՉԽԶ (1307) Պիլարդուն սպանեց զՀեթում աւաք պարոնն ու զտղա թագաւորն Լեոն. ի Նոյեմբեր ԺԷ (17) ի դաշտն Անարգարտ¹⁹:
- Ի թվին ՉԽԸ (1309) մեռաւ պարոն Արինախն, յօգոստոս ԻԷ (27)²⁰:
- Ի թվին ՉԽԹ (1310) ծնաւ Զապել թագուին զԼեոնն՝ Թ (9) յապրիլն, և ինք վաղջանեցաւ մայիս Գ (3):
- 1230 Ի թվին ՉԽԸ (1319) մտաւ Մսրա հիծելն յերկիրս հարաթայն ու Հալպայ ամիրայն, ու Լկին ի Սիս ԻԷ (27) ի մայիսն երեքշաբթի, Լ (30) ի մայիսն ի շաբաթ աւերեց զԷջմիածինն²¹:
- Ի թվին ՉԽԹ (1320) հանկաւ ի Քրիստոս աստուածասէր թագաւորն Օշին, յունիս ԺԹ (19) հինգշաբթի: Ու Լկիր յիր տեղն զիր որդին զԼեոնն ու սահմանեց պայլ զպարոն Օշին Կ(ո)ոթիկօսո տէրն ու զպարոն Հեթում Ախսուցն տէրն, որ հոգային զերկիրն Ժ (10) տարի²²:
- Եւ (օ)րհնեցին թագաւոր զԼեոն որդի Օշինն Ա (1)-ն ի փետրուարն²³:
- Եւ ի նոյն օրս պսակեցին զթագաւորս ի հետ աւամուժէլ Արիծին, դստերն պարոն Օշին Կոթիկօսոյ տերոջն:
- Ի թվին ՉԶ (1321) բռնեցին զպարոն Զապունն, Օշին թագաւորի քոյրն, ի յԱյաս Գ (3)-ն ի մարտն:
- Ի թվին ՉԶ (1321) մտաւ Տամուրտաշն յերկիրս ու գնաց ի Սիս, ի շաբաթ, ի//նոյեմբեր ԺԴ (14)-ն:
- 1231 Ի թվին ՉԶԱ (1322) երեկ Մսրա հիծելն ի յԱյաս, ի յապրիլ ԻԱ (21), չորեքշաբթի առին զԱյաս:
- Ի թվին ՉԶԲ (1323) հանկաւ ի Քրիստոս Ղուան թագուհի. և տէր Կոստրն-գին Լամբրոնցի կաթողիկոսն գնաց առ Մսրա սուլտանն:
- Ի թվին ՉԶԳ (1324) ծնաւ պարոն Հեթում Ախսուցն տիրոջն որդի Ճուֆ-րին, ի ԺԹ (19) հոքտեմբրոն²⁴:

* Հեթում Բ-ի մոտ՝ «գնացին ի Կոստանդնուպօլիս»:

- Ի թվին 226 (1326) ծնաւ նոյն պարոն Հեթում Ախտուցն տիրոջն որդի Կոստնդինն, ի հոքտեմբո ի ԺԲ (12)²⁵:
- Ի թվին 229 (1329) Ա (1) ի սեխտեմբոն, և ևոն խագաւորն յլրկեց զպարոն Հեթում Ախտուցն տէրն, սարած զալէով մի ի Ֆոանք վասն իւր թագուհի գտնելոյ: Եւ հասաւ ի Սիծիլիո կղզին ի 2(6)-ն ի հոքտեմբոն և գտեալ, որ ունէր Սիծիլիո թագաւորն զստերս երիս: Եւ իմ տեսեալ յոյժ գեղ/եցիկ մինն քան զմիւսն, [և աշոյ արարեալ խնամութիւն, և բոլէ Ֆտրիկ կամեցաւ տալ յիւր զստերացն, զոր և կամենայր թագաւորն առնուլ: Եւ անտի դարձեալ եկի ի Հայք:
- Ի թվին 229 (1330) ի 2 (6)-ն յունուարն ի Կոստիկոս, և ի ԺԴ(14)-ն յունուարն գնացի ցամքով առ թագաւորն ի Սիս: Եւ թագաւորն լուեալ զխնամութիւնն և հաւնեցաւ ռոնուլ իւր թագուհի ի զստերացն ընէ Ֆտրկայ: Եւ առաքեաց կրկին զիս զՀեթումս և Եպիսկոպոս զտէր Թագէոս և զտիկին Մլքի, սխիջալէսն և այլք՝ գնալ կրկին տեսանել զգոտերսն ընէ Ֆտրկայ: Նաւեցաք ի յԱյաս Ժէ (17) ի մարտն, և աստուծով հասաք ի Սիծիլիոյ կղզին, 2 (6)-ն ի մ/այիսն: Եւ կրկին տեսաք զգոտերսն ընէ Ֆտրկայ և ոչ կամէաք հաւանիլ ամենեքեան առնուլ զմիւսն ի գոտերաց նորա: Դարձաւ Եպիսկոպոսն առ թագաւորն, տալ զնշանս զստերացն մի ըստ միոջէ, և ևս Հեթումս մնացի անդ ի Սիլիլիայ: Եւ եկն հրաման տեսան իմոյ և ևոն թագաւորի առ իս, որ հաւանեալ էր առնուլ իւր թագուհի զաւաք զուստրն զԿոստանցիայ²⁶: Եկն հ(ր)ամանքն յունիս է (7):
- Ի թվին 22 (1331) դրաք մատնի աւաք զստերն, և ելաք ի Սիծիլիոյ 2 (6) զալէով ԺԵ (15) ի սեխտեմբոն և աստուծոյ օգնութեամբն հասաք շնոֆոր թագոհովն ի Հայք, ի Տարսոյ գետերանն՝ ԻԳ(23)-ն ի հոքտեմբոն: Եւ եղև հարսանիս և ևոն թագաւորին/ի Սիս Գ (3) ի նոյեմբրոն, ի կիրակէ: Եւ յաւուրս եղև ձիաւոր օրհնէք ՃԺ (110):
- Ի թվին 227 (1335) անիծած ազքն մահմետա շամցին, վասն բոնելոյ յՈրսկայքն զԼեոն թագաւոր. յանկասկած յիշվեց ԻԵ (25) ի մայիսն հինգշարթի, ի Քրիստոսի համբարձմանն արն ի յՈրսկայքն և ի Մլունն, և ողորմութեամբն աստուծոյ թագաւորն հանդիպեցաւ յԱտանա: Եւ կացեալ անդ միջև յերկրուն, և առեալ զգաղթկանն առջև իւր և գնաց ի Մուսուն²⁷: Եւ կեցաւ թուրքն յերկիրս ար Ը (8), ու գնաց ինչվի Տարսուս ու այրեց ու փուց զՏարսո մնարայն: Եւ ի նոյն տարիս առին սղարով զբերդն նդիրն և աւերեցին²⁸:
- Ի թվին 226 (1336) վասն պոմնին, սր ունէր հետ սուլտանին, թէ եփ դու շմորիս/ու ևս. նայ մոտեց զէտ շամցին, և երեկ ի վրա Կուկլկա, ու գտաւ թիթև ի մարդուէ, ու կովեցաւ ու իառ ԺԶ (16) յունիսն, և էառ զՃոխին, զՊուրճն, ու զԾակքն 2 (6) յուլիսն:
- Ի թվին 222 (1337) երես թագաւորն ի Հայոց երկրէն ի Սարա սուլտանն ի Միլէք նասրն՝ զՋահնայ այն դիհն իր բերդերովն ու երկրովն: Եւ ի նոյն տարիս երեսեցաւ երկինս ասթիւղն գիսաւոր: Եւ տվին ի խարամանն զԴեղնքարն և այլ բերդեր այլ խլեցին:
- Ի թվին 22 (1341) սատակեցաւ տաճկաց սուլտանն Միլէք նասրն: Եւ ի ն(ս)ոյն ամիս Իէ (27) յաղվեստոսն մեռաւ և ևոն թագաւորն՝ որդի

- Օշին թագաւորիս առաջնոյ: Եւ Եղիր պայլ Հայոց զպարոն Ճուտն րրիննն Սրո տէրոջն...:
- 127ա Ի թվին Հայոց ՉՄԴ (1305) Լեոն թագաւոր որդի պարոն Թորոս Ի Քրիստոսի սուրբ ծննդ(և)անն արն արար ձիաւոր դիս՝ զՀեթում Ախտուցն տէր ջամբուլա Հայոց:
- Ի թվին ՉԿԶ (1317) Աւշին թագաւոր յգրկեց զիս զՀեթումս յառ Ըռէ Ըռուպերտն(ւ) ու առ իր աներն, րրիննն ի յԱնաիլն. գնացի առ իրենյ ու կեցա ի դուրս յերկրէս ամիս Թ (9). ու դարձայ եկի յերկիրս:
- Ի թվին ՉԿԸ (1319) Աւշին թագաւորն յգրկեց զրս՝ զՀեթում Ախտուցն տէր ջամբուլայս ի յառ պապն ի յԱւինիունն, ու կեցայ ի դուրս ի յերկրէս տարի Ա (1) ու ամիս ԺԱ (11) ու ար ԻՐ (24), ու դարձայ եկի յերկիրս:
- 127բ Ի թվին ՉՀԸ (1329) Լեոն թագաւոր/որդի Աւշին թագաւորին յգրկեց զիս՝ զՀեթում Ախտուցն տէրս յառ րռէ Ֆտրիկն վասն իր կարգման. գնացի առ Խք ի Մսխն, ու կեցայ ի դուրս յերկրէս ամիս Ե (5), ու դարձայ ու եկի յերկիրս:
- Ի թվին ՉՀԹ (1330) նոյն թագաւոր Լեոն կրկին յգրկեց զիս՝ զՀեթում Ախտուցն տէր ջամբուլայս առ րռէ Ֆտրիկն վասն իր թագունէ բերելուն, գնացի առ ինք ի Մսինն, ու կեցայ ի դուրս ի յերկրէս տարի Ա (1) ու ամիս Զ (6): Իտարձայ ու եկի յերկիրս, ու բերի զթագունէն՝ զԿուստանցիայ՝ զաւաք դուստրն րռէ Ֆտրկա:
- Ի (ւի) թվին ՉԶԵ (1336) նոյն թագաւորն Լեոն յգրկեց զիս՝ զՀեթում Ախտուցն տէր ջամբուլայս Հայոց առ Մսրա սուլտանն ղեսպան: Գնացի ինչվի/յԱվաղնիյարիշն, և անտի դարձուց զիս սուլտանն Միլէթ նասրն, որ եկի յերկիրս. կեցայ ի դուրս ամիս**:
- 128ա Ի թվին ՉՂԴ (1344) Կի թագաւորն Հայոց յգրկեց զիս՝ զՀեթում Ախտուցն տէր ջամբուլայս Հայոց ի Կոստնդինուպոլիս՝ վասն իր թագունէ, որ բերի յերկիրս: Գնացի ի ղեսպանութիւն, նայ ոչ կամեցաւ ի յերկիրս. կեցայ ի դուրս ի յերկրէս ամիս ԶԶ (6 և կես), դարձայ ու եկի յերկիրս:

Բ

(ՎԱՍԼԻ ՄԱՐԱՋԱԽՏԻ ԺԱՄԱՆԱԿԱԿՐՈՒԹԻՒՆ) ²⁹

- 131ա Ի թվին ՊԼԱ (1382) ի հոքումբերի Ա (1) աղաւթեցաւ Լեոն թագաւորն. Հայոց ի Մսրայ ծառայութիւնն ու գնաց ի Գաղալանք:
- Ի նոյն թիւս ի նոյնմբերի Զ (6)-ն, որ է ռամատան ԺԹ (19) օրն, նստաւ Պարխուխն Մսրայ սուլտան՝ ու բռնեց զյԱյշրաֆ սուլտանին որդին՝ Եղիր ի ղնդան³⁰:
- Ի Հայոց ՊԽԸ (1399)^{***} թիւ, տաճկաց ՊԱ (1399)-ն ի շուալ ամսուս ի ԺԵ (15) օրն դրին սուլտան Մսրա զՊարխուխ սուլտանին որդին, ու Պարխուխն կենդանի է ի դժար հոգէլարք:

* Աստեղ ընդհատվում է ընագիրը: Չեռագրից թերթ է ընկել և հետագայում ավելացված է դատարկ մի թերթ, լրացնելու համար: Իսկ հաջորդ (126) թերթի առաջին էջում կրկնվում է 1323 թ. վկայութիւնը, որով վերջանում է Մմրատի տպագիր հրատարակութիւնը (տե՛ս էջ 133–134):

** Ամիսների քանակը գրված չէ:

*** Գրված է լուսանցքում:

- Եւ է թիւն հայոց Պեճ (1391) ի յո նիս Ի (20), ուրբաթ վաղջանեցաւ սուլտանն ու թաղեցին ի Մսրա ճամբահն, ի Խուպէթ նասրին դիհն, ու դրին մեծ պարոն զՕթամիշն, ղէտ գրել էր ի յիր տիաթիկն: Կեցաւ Դ (4) ամիս, ու* Այշպակն ժողվեց զչարքաշ պարոնայքն, ու ըռաշիտեց/ն Պարխուսի որդին, ու հանին զՕթամիշն ի Ստապլէն: Յետեւ ժ (10) աւուր հեծաւ Օթամիշն, ու Թաղրիուէրտին ու Ֆէրիսն ու Արդունշայն ու Աղուպշայն/ու այլ պարոնայք գիշերով, ու խանկրուեցան, ու փախան, ու զնացին ի Դամասկոս, առ Դէնումն. որ ի սուլտանին մահուն Երես էր շրջել ի Մսրայ, ու ժողովեցին հեծելնի: Ու սուլտանն զնաց ի վրա Շամբուն, ու ի առ զՂազէ ու վարեց զՇամբուն չալիշն. ու նստավ: Երեկ Շամբուն նայիպն Դէնումն ու Օթամիշն ՍԻ (50.000) հեծմնով կռվեցան, ու խանկրեց սուլտանն. որ Դէնումն զուլօմ անցաւ ու բռնուեցաւ, նայ ամէն հիծելն փախան, զնաց Օթամիշն մտաւ ի Դմշխայ բերդն ու հնազանդեցաւ սուլտանին: Երեկ սուլտանն, զնդանեց զՕթամիշն ու զամէն պարոնայքն, ու յռամատան ամսուն Զ (6) շարքեցին զՖէրիս հիճուպն ու այրեցին զմատունքն, ու զէնեցին զՕթամիշն ու տասհազարապետ պարոնի հետն, ու յղրկեցին՝ զգ խնին կախեցին ի Պազուէլն ու ի Թաղթղալայն: Ու Ելպուղաւ Մճնունն, որ մեծ ուսթատար էր, հանին Իսկանտրու զնդանէն ի Տիմիատ, ու կու դարձնին ի զնդան, նայ փախաւ ու ժողվեց յարապ ու
- 132ա թուրք, ու նեղուց ի վրա Մսրայ ժԵ (15) օր: Ու/լերեկ սուլտանն ի Շամբէն, նայ Ելպուղայն զնաց ի Սայիտին Երկիրն, զնաց հիծել յետն, նայ ինք մտաւ յԲսրայեւացեցն Երկիրն, ու փրթաւ, որ չկարցին իր ուժ այնել³¹:
- 132բ Ի թվին հայոց Պեթ (1400) ժԸ (18)-ն ի նոյեմբուն, և թիվ տաճկաց ՊԳ (1400) Ե (5) ըռապիլ ախարն, Ելավ Մսրայ սուլտանն ի Շամբն ու Երեկ Հասան Պուղայ տուատարն յառ սուլտանն յռատայնին ու ասաց, որ Թամուրլանկն առել է զՀալապ քաղաքն ու զբերդն, ու բռնել զՍայիտի սուլտանն, որ Դմրշխայ նայիպ էր: Ու հեծելավ(ա)ք, ու զՀալապայ նայիպն ու զպարոնայքն զՏոպպուլսու, ու զամէն քաղքնուն նայիպնին ու զպարոնայքն ու զհեծելնին, որ ի խաթէու ընդ այն շմնաց սուլտանին հիծել, ու Երեկ ի վրայ Դմրշխայ: Ի ԻՃ (26) ի նոյեմբուն Ելաւ սուլտանն ի ճամբահ, ու մտաւ կեցաւ ի Ղազէ Ը (8) օր: Ու Ելաք ի ճամբահ Երկուշաբթի յերեկուն, Ես հասայ ի Քսուէ առ Թաղրիուէրդին, որ Շամբու նայիպուիւնն առել էր ու քան զսուլտանն յառաջ Մսրայ հիծելով կու Երթին ի Դմրշխ չալիշ՝ Պայիպառսուս ու Տոմուտազն ու նավոզն ու այլք: Առաք խապար, որ Թամուրն առել էր զՊաղլապ ու մտել ի Պուղայն, ու իր չալիշն ի վերա լեռինն կու Երենայր մեղ:
- 133ա Բռնել ին ի Դմրշխայ մարդիք ու լսել զամէն խապար: Ի ԻԴ (24)-ն ի դեբտեմբուն, հինգշաբթի մտաւ սուլտանն ի Դմրշխ, ի շաբաթ կռվեցաւ Բ (2) չալիշն ու մախրուեցաք: Երեկ Տավաշիու թուղթ. որ պարըշին, ու զնաց անխել պացխոճ կոչեց ու զնաց ի Ջաւիխան ի Պնիտնունն, ու փախան ու Եկին ի սուլտանն պարոնորդիք Բ (2)

* Գրված է «Հիճան շրջնին» և ապա ջնջված է:

** Գրված է Ժ Ռապետ:

պարոն Այշապակն ու այլ պարոնայքն իրենց վատ թուարովն ելան փնացին քշտեցին ի հիծելին յէջքն, ու այրին աշխար ի կորուստ: Դարձաւ հիծելն ի յետ, ու թաթարն ի հետ, ու հայնց փախան զէտ ամենայն մուկն, ու սուլտանն ի խուպայ նլպուղայն, որ թէ աստուած չէր պահել, նայ զսուլտանն այլ կու առնին, ու զիշերն 2 (6)-ն յունուարն, որ ուրբաթ լուսացաւ է (7) յունուարն՝ փախաւ սուլտանն ու ամէն պարոնայքն, հասաւ թաթարն ու թազթնեց զոր հասաւ, ու մնաց քաղաքն ի յիրենց ձեռքն, ու բռնեցին զիս: Ու աստուած արար մեծ սքանչելիք, որ ի բռնել հանդիպեցան ինձ քրիստոնէք, ու գիտացան զմեզ, որ ի մեր երկիրն եկել ին ի պարոնն՝ անկաճ յառ թագաւորն, ու նաքայ եզան մեզ վկայք որ աստուծով խալըսեցաք, ու դարձուցին՝/այն քրիստոնէքն զմեզ, որ շուանով կապեցին ու քաշեցին ի քաղաքն: Թ (9) յունուարն բացին զՊապզուղին՝ ու եկին ի հիծելին Թամուրին թոռն, ամիր Զայխուռչին, նստաւ ի մեծ ճամայն, ու պարոն մի, որ պայկլարպակի էր՝ անունն Ալահտատ՝ նստաւ ի Պապզուղիւրն ու սղարեցին զբերդն բոլոր: Ու շինեցին Գ (3) բերդ, փայտ ու խոտ ու հող, շատ բարձր քան զբերդն, ու քշտեցին ներքև խանդկին նաղմ ու կրակ, որ բերդն Դ (3)—Դ(4) կտոր ընդ գետինն ի վայր զնաց, ու գտան զհիմն այրճիճ, ու այրճիճ էպթէ Դ (3) ոսկի ու Ե (5) արծաթ ի լիքն: Ամեն մէկ մարդ չաք մի ավելի, որ Գ (3) մարդի ներսն տէ՞ր***: Ու 2 (80) բարան ծեծեց զբերդն Դ (3) օր ու առին: Ու փոքրկանն շորէքշափիին օրն յսրեցայթքն մտաւ թախթսնն ի Դմրշխայ քաղաքն, որ մարդու միտք չկարէ գտնուլ, ոչ լեզու պատմել, թէ ինչ այրին. ձգեցին կրակ ի Ռ (1000) տեղ, ու զառ ու զկին ու զտղայ ու զմեծ ու զփոքր հաճին ի յիրենց իջուանքն, ու յուրբաթն օրն կոչեցին, ու մնաց մարդն ծեր տղայք կաննիք ինչու(ի) Ի—ԼՌ (20—30.000) հոգին, ու զիս մտուցին ի տարին ճամայն, ու պահեցին ինչուի յերկուսն, որ մարդ ուժ չարար: Յետև Գ (3) աւուրն, երկուշաբթի մտաք ի Դմրշխ ու տեսաք մեծ զարմացումն՝ ավելի քան զԺԾՌ (1.000.000) մարդն մեռած³²: Ու աւաք ուրբաթ գիշերն, որ շաբաթ լուսացաւ՝ հասաք ի գեղ մի Այգէ անուն, ու կեցաք Ը (8) օր, ելաք փնացաք ի Սայիտինու լեռն, ի գեղ մի անուճ: Ծահի/ու գտաք զճամալատին ի ||/րյապ տանն, որ մեզ սիրելի էր ու համօղացն զեղանունն, ու տեսել էր ի մէնէ մարդկութիւն, տեսաւ զմեզ ու արար շատ մարդկութիւն, կեցաք առ ինք ԻԲ (22) օր, ու հիւնցայ ծանր հիւրնդութիւն: Աստուած արար նոր սքանչելիք, ու ողջացուց: Իջայ ի Սայիտէ, ու նավեցաք, ու համբարձմանն ուրբաթ օրն հասայ յԵրուսաղէմ, ծանր հիվանդ: Ու յետև Ժե (15) աւուրն երեկ աստուածահար սաստ՝ մորեխ, որ շաշունն զէս հիծելի որոտ էր ու զէտ ամպ արեգականն լոյսն արգելեց, ու կերաւ զամենայն աշխարին ծառ ու թուփ, որ զմշմշին կուտն ի ծառն ծակեց

* Էջի սկզբում գրված է մի վկայութիւն (1404 թ.), որ հետո գրիշր չնշել է և գրել վերջում:

** Պամասկոսի գարպասներից մեկի անունն է:

*** Սկսած «ամեն մեկ մարդ...»-ից գրված է լուսանցքում: Վերջին բառերը կտրվել են թղթի հետ:

ու զմէջն կերաւ է—Ը—Թ (7—8—9) օր ու գնաց։ Ու յետև Ե—Ձ(5—6) աւուրն երեկ հիտեակ մորեխ, փոքր անթև գիտնովն, ղէտ մեղու, ու ծածկեց զաշխարս, ու մտաւ ի գեղ ու ի քաղաք ի վրա դետնին, բարձր(ացաւ) ի վրա ամենայնի ղէտ թիղ մի գետնովն, ու կերաւ զծառ ու զտունկ ու զթուփ, տր զփայտն այլ կերաւ³³։

135ա Ի թվին Հայոց ՊԾԳ (1404) ի տաճիկ թիվ Պ է ճալմատլավոլ* դէքտեմբերի է (7) օրն, ի Այշպակ տուատարն, ու սուտուն Համզայի, ըռասն ու պայն, ու վեցհազարպետ** պարոնն, ու տապրլխանայք, ու Ժ (10) ամիրայք, ու խասակիք, հիծան ու բացին զՀասան սուլտանին ճամայն, ու խլեցին զՊայիպարսին տունն, ու կռվեցան Դ (4) օր, ու դնացին ի Ղաղէ***։

Վ

143բ Ի թվին ՊԺԸ (1369)-ն ի մայիս] ամսուս Ի (20)-ն՝ երեկ Տարսոյ նայիպին Շուհորէ որդին ի վրայ Սրսու ի շարաթ օր, կռվեցան յուսին դիհն ու իրք մի վզեն չկարցին այնել։ Ու կերակի ի վաղունէ՛ եկին յԱնցմնց կին կանդարայն հեծմնով ու հետեկով. որին կռիվ, ու խանկրեցին զբրիստոնէքն, ու սպանին Ճ (100) մարդ, ու սպանին զպարոն Լիպարիտ պարոն Խորոս աւաք մարաջախտուն որդին, ու այրեցին զքաղաքն ու զդարպասն։ Ու կեցաւ Դ (3) ար ու դարձաւ ի յիր տեղն ի Տարսուս։ Կու ասեն, թէ Կոստնդին թագաւոր պարոն Հեթմու որդին երեք զհիծելն ու տուր տունեց զպարոն Լիպարիտն ու զքաղաքն տանկին****34։

Վ

145բ Ի թվին ՊԻԴ (1375) էառ Մարա սուլտանն զՍիս ու***** Կեպուսա տէրն թվին ՊԺԵ (1366) րոէ՛ Փետն ելաւ Ճ (100) ղալէով Իսկանտրի ու իառ ու այրեց ու թաղթնեց ու կեցաւ Գ (3) օր ու դարձաւ, ու ի մի կայլ տարին յայն օրն՝ երեկ ելաւ ի Տրապուլիս։

* Տաճկական թվականը գրված է լուսանցքում։

** 20(6000)ապետա։

*** 133բ էջում այս նույն դեպքը նկարագրված է այսպես. «Թվին Հայոց ՊԾԳ (1404) ի տաճկաց թիվ Պ է ի դեքտեմբերի է (7), ի Այշպակն ու վեցհազարպետ պարոնն, ու տապրլխանայք, ու Ժ (10) ամիրայք, ու խասակիք ժողվեցան ու խլեցին զՀասան սուլտանին Մատրասայն ու զՊայիպարսին տունն, ու կռվեցան Դ (4) օր ու գիշեր ու ցորեկ, ու գիշերով փախան ու փնացին ի Ղաղէ»։

Նախորդ երկու վկայություններում հայկական և տաճկական թվականները՝ ամսաթվերով համեմարաշխ են։

Այս վկայություն մեջ, որն, ի դեպ, երկու անգամ է կրկնված ձևագրում, այդ համապատասխանությունը չկա։ Տաճկական հարյուրավոր թվի (Պ—800) մոտ պետք է որևէ միավոր լինի, որի համար տեղ է թողնված (էջ 133բ)։ Այդ միավորը Ծ (5) թվանշանն է. տաճկական ՊԻ—Հայոց ՊԾԳ=1404-ի, Բաց թողած Ծ թվանշանը դնում ենք տեղում։

**** էջը և միտքը չի ավարտված։

***** Մինչև այստեղ առնված է գծերի մեջ՝ ջնջված

Ե

65ր Ի ՇԽԸ (1099) եղև թափումն ևրուսաղէմի և տիրեաց Գունդուֆրե Տը-պուան³⁵:

66ա Ի ՇԾ (1101) ոչ վառվեցաւ լոյս ի սուրբ զատկին...

75ա թվին 282 (1157) պարոն Հայոց Թորոս ևրօնաւորեալ վաղիսճանեցաւ և կայաւ զիշխանութիւն նորա Սիհ Եղբայր նորա:

97ա ԶԸ (1259)* և Լկն առ նա տէր Կոստանդին կաթողիկոս և Հեթում թաղաւոր և սիրեցան ի նմանէ և ազատեցին զքրիստոնեայս... և առին զմերաինս:

99ր—100ա Ի սոյն ամի (ՉԾԷ—1308). զնաց Օշին թաղաւորն ի Թաւրէժու զանն վառն Երկրիս կարեց որ և ար(ար) խնամութիւն ընդ Գորգէն թագաւոր վրաց ու այրին պոմն թուխթ առջի զանին, զԴաւիթ որդի վրաց թագաւորին ի հետ տամուժել Ալիծին³⁶ փոքր քօրն Օշին թագաւորին, ու Երեւ զԴաւիթն ի հետն ու ի թվին ԶԿ (1311)-ն*** արար հարսնիք ի Զ (6) յունուարն ի Տարսուս, ու Երեւ սիղղով**** զԿապանն իր Երկրովն, ու հաստատեց զպարոն Դաւիթն գունթ Կապանն Երկրին...***** թագաւորէն տէր էվանէ արհիւպիսկոպոսն Սիւնեաց և պարոն Շահնշահ աւաթն մարաշախտն վրաց, և այրին պոման, որ Հայոց սահմանով Լկնայ և ոչ(մ)ի րան ֆռանգութեան չիւնի յիր ա(մէ)ն Լկնդանութեանն:

126ր Ի թվին ՊԼԷ (1338) ի մայիս ժԼ՝ (18) հանկաւ ի Քրիստոս Թորոսն որդի պարոն Օշին տուայորոն ու պարոն աստուած Յակոբանց:

Չ

145ա ...Կոստոնդին³⁷ որդի պարոն Պադունին³⁸ ամս Ի (20)³⁹, Մարիոնն թագուհի ամս Ա (1)⁴⁰, Կոստոնդին որդի Պարոն Հեթում ամս Ժ (10)⁴¹. զարձեալ Մարիոնն թագուհի ամս Ա(1)⁴², Լկնն որդի Ճուան րրրնձին ամիս Ժ (10)⁴³:

Ն

ԾԱՆՈԹԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հեթում Ախտուց տիրոջ «Համառօտ պատմութիւն»-ը համեմատված է Հեթում Բ-ի տարեգրութեան տպագիր բնագրի հետ (տե՛ս «Մանր ժամանակագրութիւններ», Ա հատոր, էջ 74—89) և նշված են կարևոր տարբերութիւնները:

1. Դուրս է մնացել թվականը՝ «Ի թվին ՇԽԸ (1099)»-ը Այս պակասը գալիս է հաւանաբար ընդօրինակվող ձեռագրից:

2. Այս վկայութիւնը շղտանք մեղ մատչելի աղբյուրներում: Թերևս ժամանակագիրը Եկոնիայի սուլթան Խլիճ Ասլանի և բյուզանդական Մանուէլ Կոմենենոս կայսրի միջև տեղի ունեցած ճակատամարտը նկատի ունի, Մելիտիենի մոտ, որտեղ կայսրի զորքերը զլիւովին ջախջախվեցին:

* Թերթր կտրված է:

* Ձեռագիրը կազմելիս մի տող կտրվել է, իսկ շարունակութիւնը չի հասկացվում:

*** Գրված է ՊԿ (1411), որն ակնհայտ գրչական շփոթմունք է: Ուղղում ենք ԶԿ (1311):

**** Թերթր մաշված է, պարզ չի կարդացվում:

***** Մի տող կտրված է Թերթրի հետ:

3. Այս, ինչպես և վերը նշված վկայությունը բացակայում է Հեթում Բ-ի մոտ: Խոսքը ներսես Լամբրոնացու մասին է:

4, 5. Սրանք Հեթում Բ-ի մոտ առանձին վկայություններ են:

6. Հեթում Բ-ի, ինչպես և Սմբատի պատմության մեջ չկա: Ալիշանը այս դեպքերը դնում է 1274 թ. տակ («Սիսուան», էջ 311):

7. Ժիշտը 1253 թ. է (տե՛ս Հեթում Բ-ի և Սմբատի մոտ):

8. Եղիպտական զորքի առաջնորդ Սեմ-էլ Մոտի անունն է աղճատված ձևով:

9. Ըստ Ռաշիդ-ադ-դինի Արաղա դանը մահացել է 1282 թ. ապրիլի 1-ին (տե՛ս ՄԺ, հատ. Ա, էջ 85, ծան. էջ 98):

10. Ավելացված է լուսանցքում: Հեթում Բ-ի մոտ բացակայում է Ալիծին վերաբերող մասը:

11. Հեթում Բ-ի մոտ գրված է հաջորդ թվականի տակ:

12. Չեռագրում սխալմամբ գրված է Լեոն, ուղղել ենք՝ Հեթում:

13. Հեթում Բ-ի մոտ գրված է Քիթպուղայն, որը սխալ է (տե՛ս ՄԺ, հատ. Ա, էջ 99, ծան. էջ 121):

14. Հեթում Բ-ի մոտ գրված է նախորդ թվականի տակ:

15. Մյուսը Կիլիկիայի Մուկոն բերդն է և նրա շրջակայքը («Սիսուան», էջ 142):

16. Թորոս և Հեթում եղբայրները բանտարկված էին Բարձրբերդում: Կապանու տերը (Սամուելի մոտ տպագրված է «Կաղան» (էջ 154), բայց տողատակում՝ Կապան) սրանց մյուս եղբայր Կոստանդինն է, որը հալածում է Սմբատին և աղաչում Հեթում եղբորը: Սպանված Թորոսի որդի Լեոնը թագավոր է դառնում 1301 թվականին, որը Հեթում Ախտուց տիրոջը սուպետ է կարգում 1305 թ.:

17. Սմբատի շարունակողի մոտ այս և նախորդ վկայությունները գրված են 1299 թ. տակ (տե՛ս Սմբատայ... Պատմություն, էջ 118):

18. Խոսքը Լեոն թագավորի որդի Ներսես քահանայի մասին է (ծնվ. 1279 թ.) («Սիսուան», էջ 517):

19. Պիլարդուն 1307 թ. նոյեմբերի 17-ին Անարդաբայի դաշտում նենդաբար սպանում է Հեթում Բ և Լեոն Դ թագավորներին, Օշին սպարապետին (որ սենեակալ էր), պարոն Վասակին և այլ իշխաններին: Այս մասին տե՛ս ն. եպս. Մովսեսի «Պիլարդուի ոճիրը» հոդվածը, «Սիսուան», 1958, էջ 66): Սպանության օրը «Սիսուանում» (էջ 557) և ԺԳ՝ դարի հիշատակարաններում (էջ 55) գրված է նոյեմբերի 17-ին (ԺԷ): Բնագրում է-ի փոխարեն գրված է Ե, որը շփոթմունք է. ուղղում ենք բնագրում՝ է:

20. Նույնն է նաև Սմբատի շարունակողի մոտ (էջ 128): Ալիշանը գտնում է, որ այդ ճիշտ չէ, ճիշտ է Սամուել Անեցու շարունակողը (էջ 157), որը Ալիեխանի մահը դնում է 1317 թ., արժհետև նա մասնակցել է Սսի (1307) և Աղանայի (1316) ժողովներին և ստորագրել է՝ Լամ-րորնի տեր: Մահացել է 1317 թ. օգոստոսի 26-ին («Հայապատում», էջ 545), ԺԴ՝ դարի հիշատակարաններում՝ 1310 թ. (էջ 65):

21. Այս արշավանքը Ալիշանի մոտ գրված է 1320 թ. տակ («Սիսուան», էջ 558): էջմիա-ծինը Սսի կաթուղիկն տաճարն է՝ կառուցված Լեոն Բ թագավորի կողմից Երուսաղեմի Ս. Հակոբ տաճարի օրինակով («Սիսուան», էջ 538):

22. Լեոն մանկահասակ թագավորի խնամակալներն այստեղ երկուսն են. ընդ որում Հեթում ջամբուլան նշանակվում է իր բացակայությամբ (գտնվում էր Ավինիոնում, Հոռմի պապի մոտ): Բարսեղ Մաշկեոցի վարդապետը Օշին Պայի և Հեթում ջամբուլայի հետ հիշում է առաջինի եղբայր պարոն Կոստանդինին: Այդպես է նաև Սամուել Անեցու շարունակության մեջ (էջ 157): Դարդելը (էջ 28) այս երեքին ավելացնում է Պաղտին մարաջախտին, իսկ Ալիշանը բնորոշում է չորսին, միայն Կոստանդինի փոխարեն՝ Հեթում սենեակալին («Սիսուան», էջ 558):

23. Սմբատի շարունակողը (էջ 128) 1321 թ. տակ է դնում, Օրմանյանը՝ նույն թվականի հունվարի 6-ի («Աղգապատում», 1834), իսկ Ալիշանը՝ 1322 թ. տակ:

24. Հեթում Ախտուց տիրոջ ավագ որդին մահացել է 1358 թ., այդ մասին տառնավոր է գրել նրա կրտսեր եղբայր Կոստանդինը (Մատենադարան, ձեռ. N° 345, Հմմտ. Ալիշան, Սիսուան, էջ 413): Մինչ այդ նրան որդեկրել էր իր հորեղբայր Պաղտին մարաջախտի որդի Կոստանդին Դ թագավորը և ամուսնացրել իր դստեր՝ Ալիծի հետ 1351 թ. վերջերին («զոր և կեցաւ ի վերայ իւր և թագաւորադստերն հարսանեացն ամիսս Ղ (90)», ձեռագիր, Լենինգրադ, Արմ. B—1, էջ 476թ): Ամուսնական այս գործարքը անհրաժեշտություն կարող էր դառնալ Կոստանդին արու զավակների մահից հետո: Ալիշանը Կոստանդինի որդիներին մահը դնում է 1357 թ., Սսի սրածուծության ժամանակ («Հայ-Վինետ», էջ 131, «Սիսուան», 560), որը ստույգ լինել չի

կարող է մասսա շուններ երկու արու զավակ ունենալուց հետո որդեգրել երրորդին։ Ուրեմն նրանք ժահացել են մինչև 1351 թ.։ Մահացել էր նաև թագավորի կրտսեր եղբայր Սմրատը (ծն. 1333 թ.)։ 34 տարեկան հասակում մահանում է նաև որդեգիրը և փեսան՝ Ճոֆրին։ Հինգ տարեկան վախճանվում է նաև ինքը՝ թագավորը (1363 թ.)։ չթողնելով թագաժառանգ։

25. Հեթում Ախտուց տիրոջ կրտսեր որդին։ 1365 թ. դառնում է թագավոր մինչև 1373 թ.։ երբ սպանվում է յուրայինների կողմից։ Կոստանդին 'Բ-ի մահից հետո, 1363 թ. շրտ ոմանիք Լեոն ոմն կորզ է զթագն, այլ խոտեալ ի րաց մերժի» («Սիսուան», էջ 544 և 560)։ Բասմաճյանը հակադրվելով Ալիշանին, ենթադրում է, որ այդ Լեոնը Կոստանդին 'Բ-ի որդին էր, որ իր հորը մահուանէն յետոյ գրանց գահը, իրեն օրինաւոր ժառանգորդ» («Լեոն Ե Լուսինյան», էջ 27)։ Սակայն, ինչպես տեսնում ենք նախորդ ծախթագրության մեջ բերված հիշատակարանից, Կոստանդինը այլևս արու զավակ չունեն, այդ պատճառով որդեգրեց Ճոֆրին։

Օրմանյանը Հեթումի որդու թագավոր ընտրվելը բացատրում է նրա «փարթաւությամբ» («Ազգապատում», 1387)։ Սակայն իրականում, նա իրեն կարող էր օրինավոր ժառանգորդ համարել թագին, որովհետև ինքը թագավորի որդեգիր Ճոֆրիի եղբայրն էր։ Այս բանում կարող է որոշ դեր խաղացած լինել հոր՝ Հեթում Ախտուց տիրոջ, հայոց «ամենահզոր և մեծ» ջամրույայի հեղինակությունը (կամ միջամտությունը, եթե նա դեռ կենդանի էր)։

26. Սիցիլիայի թագավոր Ֆրեդրիկի դուստր Կոստանցիան կամ Էլեոնորան է՝ այրիացյալ կինը Կիպրոսի Հենրիկոս թագավորի։ Լեոնի առաջին կինը Օշին Պայլի դուստր Զապելն էր, որի մահից հետո ամուսնանում է Կոստանցիայի (Կոստանդիայի) հետ («Սիսուան», 363)։

27. Խոսքը Հալեպի ոստիկան Ալթուն Պուղայի Աղանա և Մուլուն կատարած ասպատակությունների մասին է («Սիսուան», 559)։

28. Նղրո բերդի գրավման ու ավերման ժամանակը սովորաբար 1336 թ. է համարվում։ Սակայն Հեթումը, Նղրո տերը, այն գնում է 1335 թ. տակ։ Այդ դեպքերի արձագանքն է 1335 թ. Կանցե բուրջում ավարտված հիշատակարանը «...ի յայսմ ամի ի թվին 927 (1335) ազգն, որ կոչի խարաման՝ մուտեալ էր ընդ երկիրս Կիլիկիո, և բազում վնասս գործեցին ի տեղիս-տեղիս» («ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 277—278)։

Նղրո գրավումը տեղի պետք է ունեցած լինի 1335 թ. վերջերին։ Հաջորդ տարին թագավորը Պաղտին մարաջախտին և Վսսիլ գրագրին ուղարկում է սուլթանի մոտ՝ Հալեպի Ալթուն Պուղայի շարագործությունների մասին տեղյակ պահելու համար։ Վերջինս գավով ձերբակալում է դեսպաններին և բանտարկում Հալեպի բերդում, ուր և մեռնում է Պաղտինը, իսկ Վսսիլը մի տարի անց վերադառնում է Կիլիկիա։

Այդ թվականին Լեոն թագավորը սուլթանի մոտ է ուղարկում նաև Հեթում Ախտուց տիրոջը։ Հեթումը շուտ վերադառնում է, և հավանաբար բանակցություններ են սկսվում երկու կողմերի միջև։ Հետևանքը լինում է այն, որ 1337 թ. «երեստ թագաւորն ի Հայոց երկրէն ի Մսրա սուլտանն ի Մէլիք Նասրն զՋահնայ այն դիհն իւր բերդովն ու երկրովն», որի մեջ էր Ճկեր գավառը Նղրո բերդով։ Վերջինս այլևս չի վերադարձվում Կիլիկիային։

29. Ժամանակագրական այս հատվածը վերագրում ենք գրչին՝ Վասիլին, որը Վսսիլ մարաջախտն էր, Լիպարիտի եղբայրը, Թորոսի որդին (տե՛ս ներածություն)։

30. Այդ հատվածները տպագրվել են Կոնիերի ցուցակում (էջ 291—92), որտեղից Վ. Հակոբյանը մուծել է իր կազմած «Մանր ժամանակագրությունների» Ա հատորի մեջ և ծանոթագրել (տե՛ս ՄԺ, էջ 390, 397...)։

31. Այս դեպքերը հիշում է Արարշահ Ահմեդ պատմագիրը իր «Պատմութիւն Լենկ Թիմուրայ» աշխատության մեջ (տե՛ս «Պատմութիւն», թարգմանեց ի տաճիկ բնագրէ Ա. վրգ. Տէր-Յովհաննիսեանց, յերուսաղէմ, 1873, էջ 108—109)։

32. Արարշահ Ահմեդի մոտ այդ մասին տե՛ս էջ 124—125։

33. Տե՛ս նույն տեղում, էջ 150։

34. Այս և հաջորդ վկայությունը գրված է գրչի կողմից ձեռագրի առաջին մասի գրչությամբ. ժամանակագրությունների կարևոր պատառիկներ են, հատկապես առաջինը (Գ), որը վերաբերում է Սսի 1369 թ. պաշտպանությանը և Լիպարիտի զոհվելուն։ «Պատմութիւն Գալ Լիպարտին» զրույցը հաստատում է այս վարկածը (Հ ո վ հ ա ն ն ե ս Թ լ կ ու ր ա ն ց ի, Տ աղ եր, աշխատասիրությամբ էմ. Պիվազյանի, 1960, Երևան, էջ 202, 274)։ Շուհորե որդու կամ Շահար Օղլու-Մանշուկի արշավանքի մասին տե՛ս «Սիսուան», էջ 542։

35. Այստեղ բերված վկայությունները Սմրատ Դունդատարլի տարեգրքի լուսանցքներում գրչի հետագայում մուծած վկայություններ են (այդ մասին տե՛ս ներածության մեջ)։

36. Վրաստանի պատմության մեջ Դավիթ VI-ի մահից մինչև Դևորգի Պայծառի փաստական թագավորությունը, այսինքն 1293—1314 թթ. համարվում են բաղմրաշխանության ժամանակաշրջան։ Հիշյալ վկայության մեջ հիշատակված վրաց թագավոր Դորգեն, հավանաբար, Դևորգի VI-ն է, որը խնամիական կապերով ամրապնդում է իր բարեկամությունը Օշինի հետ տեղի ներածություն)։

37. Այս ժամանակագրությունը համընկնում է Ներսես Պալիքենցի «Հայոց թագավորների և իշխանների կարգը» աշխատությանը (տե՛ս ՄԺ, հատ. Բ. էջ 204—206), միայն մի տարբերությամբ (չհաշված առանձին ժամանակագրական ահամապատասխանություններ), որ վերջինս լրիվ է և հասնում է մինչև 1351 թ., Կոստանդին Դ-ը, որի օրոք գրված է այն, իսկ մեր ձեռագրինը՝ սկզբից թերի է բավականին, իսկ վերջը հասցված է մինչև 1375 թ.՝ Լևոն Ե թագավորի ներկայացնում ենք այդ տարբերությունը։

38. Պաղտինը Կոստանդին Նղրի տիրոջ երրորդ որդին էր (Հեթումից և Վասակից հետո)։ Նա նույնպես վաղ տարիքից ծառայության էր մտել արքունիք։ 1319 թ. առաջ արդեն մարաշախտ էր։ Սեփական ընդդր Բարձրբերդն էր։ Ամուսնացել էր Սմբատ Դուռնդատարի Լևոն որդու դստեր՝ Մարիամի հետ։ Բնակվում էր Տարսոնում, ոտտեղ կառուցել էր մի եկեղեցի և հարստացրել սպասքով ու ձեռագրերով, որոնցից մեկի հիշատակարանում պատմվում է այդ մասին («Ճաշոց», Հոռմ, № 61, հիշատակարանը գրված է 1319 թ. երբին անապատում)։ Հայեպի ամիրա Ալթուն Պուղան հարձակվում է Մլունի և Տարսոնի վրա, ապա գրավում Նղիրը։ Թագավորը Պաղտին մարաշախտին և Վասիլ գրագրին ուղարկում է սուլթանի մոտ, սակայն Հայեպի ամիրան զավով ձերբակալում է և բանտարկում նրանց։ Պաղտինը յոթ ամիս հետո՝ 1336 թ. մեռնում է բանտում, թաղվում է Ակնեքում («ԺԴ գրքի հիշատակարաններ», էջ 295)։ Որդիներից հայտնի է Կոստանդինը, որը հետագայում դառնում է թագավոր։

39. Պաղտին մարաշախտի որդին թագավորել է Կիլիկիայում 1345—1363 թթ.։ Դարդելը նրան համարում է «բռնավոր», բայց մեր հիշատակարաններում գովերգվում է որպես խաղաղությամբ թագավորողի («Սիսուան», էջ 413)։

40. Կոստանդին Դ (39) թագավորի կինը, Օշին խնամակալի Հովհաննայից (Օշին թագավորի այրի) ունեցած դուստրու Թագապահ էր ամուսնու մահից հետո (1363—1364 թթ.) և Կոստանդին Ե թագավորից հետո (1373—1374 թթ.) մինչև Լևոն Ե վերջին թագավորը Դերվում է Լևոն վերջին թագավորի հետ, Կահրեբից շնում է Երուսաղեմ, ուր և մահանում է 1377 թ.։

41. Տե՛ս ծան. 25։

42. Տե՛ս ծան. 40։

43. Կիլիկիայի վերջին թագավորը, որ թագավորում է սասը (ումանց մոտ 9, 11) տարի։ Դերվում ու տարվում է Կահիրե 1375 թ. ապրիլի 22-ին։ Լևոն Ե թագավորի մասին տե՛ս Կ Բասմաշյանի «Լևոն Ե Լուսինյան» աշխատությունը։

ХРОНИКИ ГЕТУМА, ВЛАДЕТЕЛЯ АХТИКСКОГО, И ВАСИЛА МАРАДЖАХТА

А. С. МАТЕВОСЯН

(Р е з ю м е)

Армянская рукопись Британского музея под номером Ог 5458, микропленка которой недавно поступила в фонд Матенадарана, является сборником хроник по истории Киликийской Армении и содержит около 10 больших и мелких текстов. Одна из них—«История» Смбата Гундстабля, другая—«Хроника» царя Гетума II. Текст «Хроники» дошел неполным вследствие отсутствия нескольких листов в рукописи, а «История» Гундстабля имеет новые пространственные части, отсутствующие в печатных изданиях, и важные заметки на полях.

Среди остальных текстов и хроник, доселе неизвестных филологии, важнейшими являются краткая «Хроника» Гетума, владетеля Ахтикского, и «Хроника» Васи́ла Мараджахта (Маршала). «Хроника» Гетума, владетеля Ахтикского, для которой от начала до 1296 г. канвою служила «Хроника» царя Гетума, начинается с 1099 г. и доводится до 1344 г. Последняя часть ее (XIV в.) является важным первоисточником по

истории Киликии этого периода. Автор «Хроники» Гетум Нчреци являлся камергером царей Ошина и Левона и занимал эту должность также во времена царствования сына брата своего Констандина IV. Называется Гетум владельцем Ахтикским по названию своего нового имения, которым овладел он после того, как в 1335 г. Нчир был отторгнут от Киликии. Васил являлся писцом и хозяином упомянутой рукописи, а также автором последней «Хроники». Он был сыном Тороса Мараджахта, братом доблестного Липарита, сам также мараджахт и небезызвестный государственный деятель в период падения Киликийского армянского царства. Рукопись переписана им между 1382 и 1404 гг. «Хроника» Васнла, которая состоит из нескольких пространных свидетельств, относится в частности, к завоеванию Тамерланом городов Алеппо и Дамаск (1399 и 1400), куда переписчик попал вместе с египетскими войсками.

Особая ценность хроник Гетума и Васнла, впервые предлагаемых вниманию исследователей, заключается в том, что эти документы являются описанием очевидцев (а иногда и участников) очень интересных времен и событий. Кроме упомянутых двух хроник, приведены также отдельные выдержки из других важных хроник этой рукописи.